

Հոկտեմբեր 2ին՝ շաբաթ առտու լուսանալուն՝ մարմինն եպիսկոպոսական զգեստներով զարդարուած՝ բազմեցուցին իր տան մէջ, եւ հաւատացեալք սկսան գալ եւ աղօթել: Յետոյ ճաշու ժամուն թափոր կազմեցին Հայք, օտարազգիք, զինուորք եւ երիցունք, խաչիւ, խաչվառաւ, ջահիւք եւ խուռն բազմութեամբ հաւատացելոց եւ սկսան շարժիլ: Թափորին մէջտեղը դադաղը բարձած էին 12 լատին քահանայք, երկու կողմանէ վառեալ զինուորներ, եւ Հայեր մոմեղինօք: Առջեւէն կ'երթային լատին կրօնաւորաց խմբեր, որոնք իրենց ծիսին համեմատ կ'երգէին: Հանդիսագիրն էր տեղւոյն Հայոց ժողովրդապետն՝ Անտոնեան Միաբան Հ. Կարապետ Վ. Հալաճեան, որուն կ'ընկերանային Պետրոս Վ. Մուրատճա եւ Յովհ. Վ. Նուրտինեան:

Այսպէս թափորը մեծ շքով քաղաքին գլխաւոր փողոցէն եւ հրապարակէն անցաւ, հասաւ Հայոց եկեղեցին եւ դադաղը դրուեցաւ մահաբեմին վրայ: Հոն ժողովրդապետն ձայնաւոր Պատարագ մատոյց եւ Պաշտօն կատարեց: Նոյն օրն իրիկունը դարձեալ եկեղեցին խմբուեցան դասք քահանայից եւ ժողովուրդք: Քահանայաթաղի կարգը կատարուեցաւ, Հանգուցեալը զարդերէն մերկացուեցաւ, ուրիշ դադաղի մէջ դրուեցաւ, եւ իջեցուցաւ իր պատրաստած դամբարանը, աւագ խորանին առջեւ դէպ ի ձախակողմը: Տապանին մէջ դրին՝ կապարեայ անօթոյ մէջ ամրացուած, իր համառօտ կենսագրութիւնը, զոր Նուրտինեան վարդապետ գրած էր